

Թիւ 27287
Ապրիլ 16, 1981

Հոգեշնորհ
Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Գինկհամթըն.

Սիրելի Հայր Սուրեն,

Հաճեցէք ներքակ գանել Եկեղեցւոյդ 50-ամեակին առթիւ մեր
խօսքը, Վեհափառ Հայրապետի լուսանկարը, ինչպէս նաեւ նորին
Արքուիթեան Կոնդակներէն եւ խօսքերէն հատուածներ, որոնց մէ-
ջէն ձեր յարմար դատածները կրնաք սպել գրքոյկին մէջ:

Ձեզի կը մաղթենք քաջատողջութիւն եւ երկօրդէքիւն::

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՈՒՄԸՆ ՀՕՐ ԽՕՍԷԸ
ԳԻՆԿՀԱՄԹԸՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Հոգեկան անխառն ուրախութեամբ կ'ողջունենք Գինկհամթընի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ 50-ամեակը, որ ինքնին կենդանի վկայութիւնն է որ համեստ պայմաններու մէջ կազմուած մեր այս համայնքը՝ այսօր աճած ու բարգաւաճած է եւ մեծ թափով ու եռանդով կը շարունակէ աստուածահաճոյ իր առաքելութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցին, որ հիմնուած է մեր եռամեծար հայրապետներու նշմարիտ ու անխախտ հաւատքին վրայ, եղած է նաեւ մեր հոգեւոր արժէքներու անխորտակելի գանձարանը, ուր պահուած, պահպանուած ու յաջորդ սերունդներուն փոխանցուած է մեր հոգեւոր ու ազգային փառաւոր ժառանգութիւնը: Այս համոզումով է որ հինգ տասնամեակներ առաջ, Գինկհամթըն քաղաքի մէջ ընակութիւն հաստատող փոքր թիւով հայեր քով քովի գալով, անտեսելով ամէն խոչընդոտ ու դժուարութիւն, հիմը դրին իրենց Աղօթքի Տան:

Եւ այսօր, արդար հպարտութեամբ, երբ կը տօնախմբուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ 50-ամեակը, արժանի է որ յիշատակուին նաեւ մեզմէ յաւէտ քաժնուած Հոգեւոր Հովիւները, հիմնադիր եւ ժխական Խորհուրդներու անդամները եւ հաւատացեալները, եւ աղօթք մատուցուի անոնց ազնիւ հոգիներուն համար:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց, կը շնորհաւորենք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեր համայնքը, եւ կը մաղթենք որ Տիրոջ օրհնութիւնը միշտ պահպան ըլլայ անոր վրայ, եւ Հոգեւոր Հովիւ, ժխական Խորհուրդ ու Եկեղեցական կազմակերպութիւններ ծաղկուն պահեն համայնքի հոգեւոր, կրթական, մշակութային եւ ընկերային կեանքը:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՐՊՈՍ
Առաջնորդ

Ապրիլ 16, 1981
Նիւ Եորք, Ն.Ե.